Համաձայնագիր N 3
Քսանյոթը հունվարի երկու հազար տասնյոթ թվականին կնքված
ՊԳԿՎ-2017-ԲԸԱՀ-3 պայմանագրի

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան 14 փետրվարի երկու հազար քսան թվական

«Հանարդնախագիծ» բաց բաժնետիրական ընկերությունը (հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4/չորս/, պետական գրանցման համարը՝ 286.130.05566, գրանցման ամսաթիվը 01.12.2004թ./մեկը դեկտեմբերի երկու հազար չորս/, վկայական՝ 03 Ա 066836) այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս տնօրեն Արայիկ Հարությունյանի (նույնականացման քարտ 000954255, տրված՝ 22.01.2013թ. /քսաներկուսը հունվարի երկու հազար տասներեք/, 046-ի կողմից, բնակության վայրը՝ ք. Եղվարդ, Ազատամարտիկների 2/երկու/), որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 4/չորս/), այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող տիկին Մելանյա Ղուշչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, և որի անունից համաձայն 01.02.2020թ. (մեկը փետրվարի փետրվարի երկու հազար քսան) տրված լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ Մարինե Փարսադանյանը (նույնականացման քարտ՝ 010719383, տրված 30.11.2018թ./ երեսունը նոյեմբերի երկու հազար տասնութ/ 055-ի կողմից, բնակության վայրը՝ Լոռու մարզ, գ. Շնող, 11 փողոց, 14 տուն) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Սույն համաձայնագիրը կնքվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 (երկու հազար քսան) թվականի հունվարի 16-ի (տասնվեցի) N 37-Ն (երեսունյոթ) և 27.01.2017 (քսանյոթը հունվարի երկու հազար տասնյոթ) թվականին կնքված ՊԳԿՎ-2017-ԲԸԱՀ-3 պայմանագրի 9.3 կետը:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 1.3 կետում նշված 31.12.2019թ.-ը (երեսունմեկը դեկտեմբերի երկու հազար տասնինը) փոխարինել 31.12.2020 թ.-ով (երեսունմեկը դեկտեմբերի երկու հազար քսան):

1.2 Պայմանագրի 2.4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «մինչև 2020 (երկու հազար քսան) թվականի դեկտեմբերի 25-ը (քսանհինգ) վճարել Օբյեկտի վարձավճարի գումարը՝ 20722800 (քսան միլիոն յոթ հարյուր քսաներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ»:

1.3 Պայմանագրի 9-րդ կետում ավելացնել 9.7 ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝ Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը կնքելու պահին առկա է քննիչի 21.02.2019 թվականի որոշմամբ կիրառված արգելանք համաձայն Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից 31.01.2020 (երեսունմեկը հունվարի երկու հազար քսան) թվականին տրված N ՄՏ-31012020-01-0412 անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի:

Առկա է 23.01.2020 թվականի ՀՀ Հատուկ Քննչական Ծառայության կողմից տրված թիվ 18-07 կգ-20 գրությունը հետևյալ բովանդակությամբ՝ վարույթն իրականացնող մարմինը առարկություն չունի և տալիս է իր համաձայնությունը, որպեսզի քաղաք Երևան, Տիգրան Մեծի 4 հասցեում գտնվող շենքից ՀՀ վիճակագրական կոմիտեի Երևան քաղաքի գործակալությունը մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը վարձակալական հիմունքներով տարածք տրամադրվի:

2.2 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում նոտարական վավերացման պահից, կնքված է համարվում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրն ենթակա է նոտարական վավերացման, իսկ համաձայնագրով ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

2.5 Սույն համաձայնագիրն օրինական է միայն այն դեպքում, եթե այն ստորագրված է կողմերի կողմից և վավերացված է նոտարի կողմից:

2.6 Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ, մեկ օրինակը պահվում է նոտարական գործում, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում գրանցելու համար: Համաձայնագրի օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Վարձատու	**Վարձակալ**
«Հանարդնախագիծ» ԲԲԸ	Պետական գույքի կառավարման կոմիտե,
ք. Երևան, Տիգրան Մեծի 4	ք. Երևան, Տիգրան Մեծի 4
«Անելիք Բանկ»ՓԲԸ	ՀՀ ՖՆ աշխ. գործառն. վարչություն
Հ/Հ 11800038047700	Հ/Հ 900011145027
ՀՎՀՀ 02507379	ՀՎՀՀ 02528489
Տնօրեն	Գլխավոր քարտուղարի
Արայիկ Հարությունյան	պարտականությունները կատարող
/ստորագրություն/	Մ. Ղուշչյան
Կ.Տ	/ստորագրություն/
	Կ.Տ

ական ակտի կոդ: 520-20200203-117-4445100
ական ակտի գաղտնագիր: 3BH0R7

երկու հազար քսան թվականի փետրվարի երեք

սույն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ Հայաստանի Հանրապետության ԵՐԵՎԱՆ նոտարական տարածքի նոտար ԷԼՄԻՐԱ ԳԵՎՈՐԳԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՍ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ՝ ---791--------- ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Էլմիրա Գևորգի Դանիելյան